Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն



Տերը միսիոներների կարիք ունի

Անցած հոկտեմբերի գերազույն համաժողովին ես կոչ արեցի ավելի շատ միսիոներներ ունենալու: Յուրաքանչյուր արժանի ունակ երիտասարդ տղամարդ պետք է պատրաստվի միսիայում ծառայելուն: Միսիոներական ծառայությունը քահանայության պարտականություն է՝ պարտավորություն, որ Տերն ակնկալում է մեզանից, ում այսքան շատ է տրված: Երիտասարդ տղամարդիկ, ես հորդորում եմ ձեզ պատրաստվել ծառայության որպես միսիոներ: Պահեք ձեզ մաքուր, անարատ և արժանի՝ Տիրոջը ներկայացնելու: Հետևեք ձեր առողջությանը և ուժերին: Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Եթե հնարավոր է, մասնակցեք սեմինարիային կամ ինստիտուտին: Ծանոթացեք *Քարոզիր Իմ Ավետարանը* միսոներական ձեռնարկին:

Քույրեր, թեև դուք չունեք որպես լիաժամկետ միսիոներներ ծառայելու քահանայության նույն պարտականությունը, դուք նույնպես արժեքավոր ներդրում ունեք որպես միսիոներներ, և մենք ողջունում ենք ձեր ծառայությունը:

Հասուն եղբայրներին և քույրերին ես հիշեցնում եմ, որ Տերը շատ ու շատ ավագ զույգերի կարիքն ունի: Եթե դեռ չեք հասել այն տարիքին, երբ կարող եք ծառայել միսիայում որպես զույգեր, ես կոչ եմ անում այժմ պատրաստվել այն օրվան, երբ ձեր կնոջ կամ ամուսնու հետ կկարողանաք դա անել, եթե ձեր պայմանները ներեն: Կան մի քանի պահեր ձեր կյանքում, երբ դուք կվայելեք հոգու և բավարարվածության քաղցրությունը, որը Վարդապետի աշխատանքում՝ միասին լիաժամկետ միսիոներական ծառայության արդյունքում է գալիս:

Ձեզանից ոմանք կարող է բնույթով ամաչկոտ լինեն կամ անհամապատասխան իրենց զգան ծառայության կոչին դրական պատասխան տալու համար: Հիշեք, որ սա Տիրոջ գործն է, և երբ մենք Տիրոջ այգում ենք, մենք ստանում ենք Տիրոջ օգնությունը: Տերը կամրացնի այն մեջքը, որի վրա ծանր բեռ է դրել:

Մյուսները, լինելով արժանի, կարող են կարծել, թե ավելի կարևոր առաջնահերթություններ ունեն: Ես լավ եմ հիշում Տիրոջ խոստումը. «Ես ինձ փառավորողներին կփառավորեմ» (Ա Թագավորաց Բ.30): Մեզանից ոչ ոք ավելի շատ չի պատվի մեր Երկնային Հորը և մեր Փրկչին, քան որպես նվիրված և կարեկցող միսիոներ ծառայելու միջոցով:

Նման ծառայության օրինակ է հանդիսանում Յուլիուս և Դորոթի Ֆուսսեկների փորձը, ովքեր լիաժամկետ միսիայի կանչվեցին Լեհաստան: Եղբայր Ֆուսսեկը ծնվել էր Լեհաստանում: Նա խոսում էր լեհերեն: Նա սիրում էր ժողովրդին: Քույր Ֆուսսեկը

ծնվել էր Անգլիայում և մի փոքր գիտեր լեհերեն, և ոչինչ չգիտեր ժողովրդի մասին: Վստահելով Տիրոջը, նրանք ընդունեցին իրենց հանձնարարականը: Աշխատանքը մեկուսացած էր, խնդիրը՝ ծանր: Այդ ժամանակ Լեհաստանում միսիա դեռ հաստատված չէր: Ֆուսսեկներին հանձնարարվել էր ճանապարհ նախապատրաստել միսիա ստեղծելու համար:

Արդյո՞ք Երեց և Քույր Ֆուսսեկները հուսահատվեցին իրենց հանձնարարության ծավալի պատճառով: Ոչ մի վայրկյան: Նրանք գիտեին, որ իրենց կանչը Աստծուց էր: Նրանք աղոթեցին Նրա աստվածային օգնության համար և ողջ սրտով նվիրվեցին այդ աշխատանքին:

Ժամանակ անց, Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, Երեց Հանս Ռինգերը՝ այդ ժամանակ Յոթանասունից, և ես Երեց Ֆուսսեկի ուղեկցությամբ հանդիպեցինք Լեհաստանի կրոնական գործերի նախարար՝ Ադամ Վոպատկային: Նա ասաց. «Ձեր եկեղեցին ողջունվում է այստեղ: Դուք կարող եք կառուցել ձեր շենքերը, դուք կարող եք ուղարկել ձեր միսիոներներին: Այս մարդը, - նա մատնացույց արեց Յուլիուս Ֆուսսեկին, - լավ ծառայություն է արել ձեր եկեղեցուն: Դուք կարող եք երախտապարտ լինել նրա օրինակի և նրա աշխատանքի համար»:

Ֆուսսեկների նման, եկեք անենք այն, ինչ պետք է անենք Տիրոջ գործի համար: Ապա Յուլիուս և Դորոթի Ֆուսսեկների հետ միասին մենք կարող ենք կրկնել Սաղմոսի խոսքերը.

«Իմ օգնությունը Տերից է, որ երկինքն ու երկիրս արավ:

. . . Քո պահապանը չի քնիլ:

Ահա Իսրայելի պահապանը չի ննջիլ և չի քնանալ» (Սաղմոս ՃԻԱ.2–4):

Ուսուցանում այս ուղերձից

Teaching, No Greater Call գրքում առաջարկվում է կիսվել անձնական փորձով այն մասին, թե ինչպես է ավետարանի որևէ սկզբունքով ապրելն օրհնել ձեր կյանքը, և հրավիրել նրանց, ում ուսուցանում եք, համառոտ պատմել իրենց անձնական փորձից ([1999], 159): Կարդացեք այս ուղերձը և խնդրեք ընտանիքի անդամներին, որոնց մասին խոսել է Նախագահ Մոնսոնը, ծառայել միսիայում: Կիսվեք լիաժամկետ միսիոներ լինելու ձեր կամ այլ մարդկանց փորձով, կամ պատմեք ապագայում որպես միսիոներ ծառայելու ձեր ծրագրերի մասին: Խնդրեք ընտանիքի անդամներին կիսվել իրենց ծրագրերով և դրական փորձառություններով:

Երիտասարդներ

Հեծանվով դեպի ապագա

Պիտեր Էվանս և Ռիչարդ Մ. Ռոմնի

Շատ երիտասարդ տղամարդիկ ֆինանսապես պատրաստվում են միսիայի ծառայության: Աֆրիկայում այդ նախապատրաստության մասն է կազմում անձնագիր ստանալու համար փող վաստակելը: Սեդրիկ Չիամբինը իր համար անհրաժեշտ գումարը վաստակել է ձեռնարկատիրական եղանակով՝ բանան վաճառելով հեծանվի ետևում ամրացված զամբյուղից:

Սեդրիկն ապրում է Լուպուտայում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն: Նա Լուպուտայի շրջանի 45 երիտասարդ տղամարդկանցից մեկն է, ովքեր աշխատում են և գումար հավաքում անձնագիր ստանալու համար, որպեսզի գնան միսիայի: Կոնգոյի ԴՀ-ում անձնագիրն արժե 250 դոլլար, որը կազմում է տուն կառուցելու համար անհրաժեշտ գումարի երկու-երրորդ մասը:

Սակայն Սեդրիկը չէր վհատվում: Նա հավաքեց միսիայի համար անհրաժեշտ գումարը, հեծանվով անցնելով 15–30 կմ Լուպուտայից դեպի փոքր գյուղերը, որտեղ նա գնում էր բանան, ապա ծանր բեռնված, հատելով Աֆրիկյան սավաննան, վերադառնում քաղաք՝ բանանը վաճառելու: Ամեն շաբաթ ավազոտ ճանապարհներով նա անցնում էր մոտ 180 կմ և միայն մի անգամ անհավասարակշռված բեռը վար ընկավ:

Իր աշխատանքով Սեդրիկը կարողացավ վաստակել շաբաթը 1.25 դոլլար, որը տարեկան կազմում էր 65 դոլլար: Չորս տարի պահանջվեց, որպեսզի նա բավական գումար հավաքեր անձնագիր գնելու համար, սակայն այժմ նա գիտի, որ իր ապագայում տեղ կգտնի լիաժամկետ միսիան, քանի որ նա ֆինանսապես պատրաստ է պատասխանելու ծառայության կանչին:

Երեխաներ

Ես կպատրաստվեմ փոքր տարիքից

Օգնելու համար երեխաներին հիշել Նախագահ Մոնսոնի կոչը՝ պատրաստվել ծառայելու միսիայում, պատրաստեք մի վկայական, օգտագործելով ստորև տրված տեքստը, որի տակ երեխաները կստորագրվեն և որը նրանք կպահեն որպես հիշեցում, փակցնելով իրենց պատին կամ պահելով իրենց օրագրի մեջ:

Ես կպատրաստվեմ

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կոչ է արել պատրաստվել ծառայել միսիայում: Ես կանեմ հետևյալը.

- Կպահեմ ինձ մաքուր, անարատ և արժանի՝ ներկայացնելու Տիրոջը:
- Կպահպանեմ իմ առողջությունը և ուժերը:
- Կաղոթեմ ու կուսումնասիրեմ սուրբ գրությունները:

Ես կպատրաստվեմ ծառայելու միսիայում:

_____

(ստորագրություն)

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *First Presidency Message, January 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09761 201

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Սփոփող Միության Պատմությունն ու Ժառանգությունը

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Էլիզա Ռ. Սնոուն վերհիշում էր Ջոզեֆ Սմիթ Մարգարեի ուսմունքներից, որ «չնայած [Սփոփող Միություն] անունը կարող է ժամանակակից լինել, կազմակերպությունը հին ծագում ունի»:[1]

Երկնային Հայրը և Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը, այցելեցին Ջոզեֆ Սմիթին և նրա միջոցով վերականգնեցին ավետարանի լրիվությունը երկրի վրա: Սփոփող Միությունը այդ վերականգնման մի մասն էր: Եկեղեցու կազմավորումն ավարտված չէր, մինչև որ կազմավորվեցին քույրերը:[2]

Առաջիկա ամիսների ընթացքում յուրաքանչյուր Այցելող Ուսուցիչների Ուղերձ մեզ հնարավորություն կտա ավելին սովորել Սփոփող Միության պատմության և վերականգնված ավետարանում դրա դերի մասին: Բազմաթիվ պատճառներով մեր պատմությունը հասկանալը ոչ միայն կարևոր է, այլ *միանգամայն անհրաժեշտ*:

Առաջին, մեր պատմությունը հասկանալը ոգեշնչում է մեզ լինել Աստծո կին, ինչպիսին մենք պետք է լինենք: Հետևելով Վերջին օրերի Սրբերի վեհանձն կանանց, մենք կարող ենք սովորել անցյալից, թե ինչպես դիմավորել ապագան:[3]

Երկրորդ, մեր պատմությունը սովորեցնում է, որ նույն սկզբունքները, որ գոյություն ունեին Եկեղեցու վաղ շրջանում, այսօրվա մեր հիմնական սկզբունքներն են: Այս գիտելիքը և մեր հավատքն ու անձնական արդարակեցությունը մեծացնելու, ընտանիքներն ու տները ամրացնելու, և կարիքավորներին օգնելու մեր նպատակները կապ են ստեղծում մեր անցյալի ու ներկայի միջև:

Երրորդ, գնահատելով մեր պատմությունը, մենք կարող ենք ավելի լավ կիսվել մեր հոգևոր ժառանգությամբ: Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Դուք փոխանցում եք այդ ժառանգությունը, երբ օգնում եք մյուսներին ստանալ գթության պարգևը: . . . Սփոփող Միության պատմությունը գրված է խոսքերով և թվերով, սակայն դրա ժառանգությունը փոխանցվում է սրտից սիրտ»:[4]

Վերջապես, մեր պատմությունը հասկանալը օգնում է մեզ լինել ապագա Սփոփող Միության գործող մաս: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) բացատրել է. «Մենք գիտենք, որ կանայք, ովքեր խորին երախտագիտություն ունեն անցյալի հանդեպ, շահագրգռված կլինեն արդար ապագա ձևավորել»:[5]

Ջուլի Բ. Բեք, Սփոփող Միության գերագույն նախագահ:

Սուրբ Գրություններից

Եսթեր Թ.28–29, Հռովմայեցիս ԺԶ.1–2, Ալմա 37.8, Մորոնի 7.45–47

Մեր պատմությունից

«Սփոփող Միությունը Տիրոջ կազմակերպությունն է կանանց համար»:[6] Որպես մարգարե Ջոզեֆ Սմիթը կազմավորեց Սփոփող Միությունը մարտի 17-ին, 1842թ.:Այդ առաջին ժողովի փոքրիկ, խառը խումբը նվիրյալ կանայք էին, այսօրվա Սփոփող Միության քույրերի նման: «Ամենափոքրերը երեք դեռահասներ էին, և ամենամեծը մոտ հիսունամյա կին էր: Կանանցից տասնմեկը ամուսնացած էին, երկուսը՝ ամուրի, վեցը ամուսնացած չէին և մեկի ամուսնական կարգավիճակը անհայտ է: Նրանց կրթությունն ու մասնագիտությունները շատ բազմազան էին, ինչպես նաև նրանց նյութական պայմանները: Նրանց բազմազանությունը գնալով մեծանում էր, մինչ կազմակերպության անդամությունը շարունակում էր աճել, բայց նրանք մեկ էին և կշարունակեն այդպիսին էլ լինել»:[7]

Հղումներ

1. Eliza R. Snow, “Female Relief Society,” *Deseret News,* Apr. 22, 1868, 81:
2. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 64:
3. Տես Լ. Թոմ Փերի, «Անցյալի փորձով դիմավորել ապագան», *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 73-76:
4. Հենրի Բ. Այրինգ, «Սփոփող Միության տևական ժառանգությունը», *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 124-25:
5. Spencer W. Kimball, “Privileges and Responsibilities of Sisters,” *Ensign,* Nov. 1978, 102:
6. Spencer W. Kimball, “Relief Society—Its Promise and Potential,” *Ensign,* Mar. 1976, 4:
7. Jill Mulvay Derr, Janath Russell Cannon, and Maureen Ursenbach Beecher, *Women of Covenant* (1992), 28:

Ի՞նչ կարող եմ ես անել

1. Ի՞նչ կարող եմ ես անել, որ օգնեմ քույրերին, որոնց այցելում եմ, ստանալ գթության պարգևը:

2. Ի՞նչ կարող եմ սկսել անել այս ամիս ինձ համար, որ առաքինի ապագա ունենամ: Իմ ընտանիքի՞ համար: Ուրիշների՞ համար:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2011 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/10: Թարգմանության հաստատումը. 6/10: *Visiting Teaching Message, January 2011*-ի թարգմանությունը: Armenian: 09761 201